Ճաշակ մեղասէր՝ [1] ճարակօղ ախտից՝ ճեպով վանեաց զիս. Մարմին ես դարձայ՝ մոլեկան ախտիւք՝ միշտ պարարիլով. տ՝ր ողորմեա՛՝։

Ցեղակարծ ժամու՝ յեղկելոյս վերայ՝ յառնէ չար
5 գազանն. նկուն զիս արար՝ նշաւակ կացոյց՝ նետիւք խոցոտեալ. տ՝ր ողորմեա՛՝։

Շրջեցան զինև՝ շունք արեան արբուք՝ շաղախեալ խոհերս. Որոգայթ լարեալ՝ որսորդք խաւարին որսացան զանձն իմ. տ՝ր ողորմեա՛՝։

10 Զարշարեալ լինիմ՝ չար վշտաց գերիս՝ չունիմ ես հանգիստ. Պետ այլոց կոչիմ՝ պարտական գտօղս՝ պարտուց յանցանաց. տ՝ր ողորմեա. տ՝ր ողոր՛՝։

Զանիւք ոչ փութամ՝ Ջատագով լինել՝ Ջերմեռանդ սրտիւ. ռահին երկնընթաց՝ ռահիւ լուսազգեաց՝
15 ռամիկս չհետևեալ. տ՝ր ողորմեա՝, տ՝ր ողորմեա. տ՝ր ող՛՝։

Սիրով կենցաղոյս՝ սաստիկ տոչորիմ՝ սարսափ ոչ ունիմ. Վարանիմ ի միտս՝ վշտօք տառապեալս՝ վ՝ս իմոց մեղաց. տ՝ր ողորմեա։

20 Տարտարոս ներքին՝ տագնապ դառնագոյն՝ տխրելոյս բաժին. Ընական հրամանն՝ բախական պատուէրն՝ բոտինս չընկալայ. տ՝ր ողոր՛՝։

Ցասմնական կրից՝ ցանկութեան ախտից՝ ցուցայ հեղինակ. Լիւսեալ խուռն ախտիւք՝ լիւծեալ մաշե-
25 ցայ՝ լիւսօղս չարագործ. տ՝ր ողորմեա՝, տ՝ր ողորմեա՝, տ՝ր ող՛՝։

Փրկել ով անձն իմ՝ փութա դու ինքնին՝ փարելի հայցմամբ. Քո վախճան կենաց՝ Քեզ միշտ մերձ իմա՝ Քննիչ տ՝ր մեր կայ. տ՝ր ող՛՝։

Այս երկասիր ծնունդ փանաքի մտաց
վշտակիր ղազար արեղայիս։

---

1 Զ. մեղասէր ի մանիշ. թանաք. յետ. աւլ.